



**ՔԱՐՈՉ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ՝
«ԴՈՒՔ ԷՔ ԱՇԽԱՐՀԻ ԼՈՅՍԸ: ԼԵՈՒՆ ՎՐԱՅ ՇԻՆՈՒԱԾ ՔԱՂԱՔ ՄԸ
ՉԻ ԿՐՆԱՐ ՊԱՅՈՒԸՏԻԼ»¹ ԽՕՍՔԻՆ ՄԱՍԻՆ**

Այս խօսքին մասին շատ բան հռչակելի է, մանաւանդ որ Տիրոջ հետեւորդներուն տօնն է եւ արժանի՝ կարեւորելու:

Սակայն, նախ բեր տեսնենք, թէ ինչ գովասանութիւն կը պատշաճի Սուրբ Առաքեալներուն, որոնցմով անոնք գերազանց են, քան ամբողջ տիեզերքը:

Նախ՝ ինչպէս Տէրը կը գովէ, թէ՛ «երանի՛ ձեր աշխարհը, որովհետեւ կը տեսնեմ, եւ ապաւնեմ՝ որովհետեւ կը լսեմ, քանի որ բազմաթիւ արդարներ ու թագաւորներ ցանկացան տեսնել, ինչ որ կը տեսնեմ ու շտեման, եւ լսել ինչ կը լսեմ ու շլեցիմ»²: Այդ պատճառով գերագոյն են, քան ամբողջ տիեզերքը:

Երկրորդ՝ որովհետեւ անոնք որ աշխարհի վրայ կը թագաւորեն, որ գեր ի վեր կ'երեւին քան բոլորը, կը ծառայեն ու կը խոնարհին անոնց դիմաց, եւ աշխարհի համար գովելիներ են: Արդ, եթէ ասոնք կը գովուին, ապա եւս առաւել անոնք, որոնք Երկնաւոր Թագաւորին սպասաւորներն ու Աստուծոյ տան բարի տնտեսներն են:

Երրորդ՝ քանի որ աշխարհի վրայ մարդիկ կ'ընտրեն ու գովասանութեամբ կը պատուեն, աշխարհի մէջ գովելի են, ապա ուրեմն անոնք, որոնք աշխարհի գոյութենէն իսկ առաջ ընտրուած են, անոնք պատուական ու գերազարդ են՝ ըստ այնմ. «Աշխարհի գոյութենէն առաջ իսկ ընտրած էր»³:

Չորրորդ՝ որովհետեւ անոնք, որոնք մարդու խորհուրդները կ'իմանան, գերափառ կը գովուին, ապա ուրեմն անոնք որոնք Աստուծոյ խոր-

¹ Մատթ. Ե. 14:

² Հմմտ. Ղուկ. Ժ. 23:

³ Եփես. Ա. 4:

հուրդները գիտեն, վեհափառագոյն են, քան բոլորը, որով գովաբանուելով կը փառաւորուէին առաքեալներուն խումբերը՝ ըստ այնմ. «Աստուծոյ խորհուրդներուն հարիւրապետներն են»⁴:

Հինգերորդ՝ քանի որ անոնք, որոնց մարդիկը կը սիրեն, երանելիներ կ'ըլլան, իսկ անոր, որուն Աստուած կը սիրէ, բոլորէն աւելի վեհագոյն է: Արդ, Աստուած Սուրբ Առաքեալները սիրեց, այդ պատճառով Տէրը կ'ըսէ. «Հայրս պիտի սիրէ ձեզ, ես ալ սիրեցի ձեզ եւ ձեզ դրի, որպէսզի դուք երթաք ու պաշտէք...»⁵:

Վեցերորդ՝ որովհետեւ աշխարհի արհեստաւորները կը գովուին չարչարանքով իրենց արհեստները ցուցնելով: Իսկ Սուրբ Առաքեալները սքանչելի հրաշքներով գեր ի վեր եղան, որոնք աստուածապէս մեռելներուն յարութին կու տային, կաղերը ոտքի կը հանէին, կոյրերուն աչքերը կը բանային⁶, ինչպէս Տաբիթան⁷, ի ծնէ կաղը⁸, եւ միւս բոլորը:

Եօթներորդ՝ քանի որ անոնք, որոնք գիւղերը կամ ագարակները իրենց թագաւորներուն կը հպատակեցնեն, պատուական պսակներ կը ստանան իրենց տէրերէն ու քաջի համբաւ կ'ընդունին: Իսկ սուրբ առաքեալները ամբողջ տիեզերքը աստուածային կրօնքին դարձուցին: Այդ պատճառով Տէրը այն ատեն պիտի ըսէ. «Բարի ու հաւատարիմ ծառայ, մտի՛ր Տիրոջ ուրախութենէն ներս»⁹:

Ութերորդ՝ որովհետեւ աշխարհի հսկաներն ու գեղադէմները կը գովուին: Իսկ առաքեալները Սուրբ Հոգիին պայծառութիւնը զգեցան ու առաքինութեամբ հսկաներ եղան՝ յաղթելով հսկային՝ սաստանային, հետեւաբար գովելի են:

Իններորդ՝ քանի որ իւրաքանչիւր ծառայ, որ իր տիրոջ արիւնին փոխարէն իր արիւնը կու տայ, գովելի է: Իսկ Սուրբ Առաքեալները իրենց արիւնը Տիրոջ անունին համար թափեցին՝ ըստ այնմ. «Կեանքիս ընթացքը աւարտեցի, հաւատքը պահեցի: Ասկէ ետք ինծի կը մնայ արդարութեան պսակը»¹⁰, հետեւաբար գովելի են:

⁴ Տէս Ա. Կորնթ. Դ. 1:

⁵ Հմմտ. Յովհ. Ժե. 9, 16:

⁶ Մրկ. ԺԲ. 46–51:

⁷ Տէս Գործք. ԺԹ. 40:

⁸ Տէս Գործք. Գ. 1–10:

⁹ Մատթ. Իե. 21:

¹⁰ Տէս Բ. Տիմ. Դ. 7–8:

Տասներորդ՝ որովհետեւ անոնք, որոնք դատաւոր կարգուած են մարդոց կողմէ, անոնց պատիւը աւելի է: Իսկ սուրբ առաքեալները Քրիստոսի հետ դատաւորներ են՝ ըստ այնմ. «Դո՛ւք եւս տասներկու արքունեք Վրայ պիտի նստի՞՞ դատելու համար Իսրայէլի տասներկու ցեղերը»¹¹, հետեւաբար արժանի են տօնուելու ու պատուելու, այդ պատճառով Տէրը կ'ըսէ. «Դո՛ւք Էք աշխարհի լոյսը»¹²:

Նախքան խօսքին մեկնութիւնը, տեսնենք թէ ինչո՞ւ համար տասներկու առաքեալներ ընտրեց եւ ո՛չ թէ աւելի կամ նուազ: Ասիկա բազմաթիւ պատճառներով.

Նախ՝ որպէսզի եկեղեցին երկինքին նմանի: Արդարեւ, երկինքին մէջ տասներկու տանուտէրեր կարգուած են ըստ կարգի¹³, որով այն կը շարժի, ու երկրի վրայ իրենց ազդուժը կը ցուցնեն, այդ պատճառով եկեղեցւոյ մէջ տասներկու առաքեալները կարգեց, որոնք Հոգիին զօրութեամբ տիեզերքին շնորհքներ կը բաշխեն:

Երկրորդ՝ որովհետեւ Տէրը անմարմիններու տասներկու դասերուն մասին ըսաւ՝ ըստ այնմ. «Հիմա կը խնդրեմ Հօրմէս, եւ հրեշտակներու աւելի քան տասներկու գումդեր կ'ուղարկէ»¹⁴: Ասոր նմանութեամբ եկեղեցիէն ներս տասներկու առաքեալները կարգեց, որ Եկեղեցւոյ հաստատութեան սիւներն են:

Երրորդ՝ քանի որ փոքր աշխարհը տասներկու անդամներ ունի, որն է մարդը, ըստ Դէմոկրիտոսի¹⁵: Անոնք մարդոց համար ընտրուեցան, որոնք աշխատանքի չարչարանքներով հեթանոսներու ազգերը կազմեցին, իբրեւ մարդ մը տուն ու տաճար Հոգիին, այդ պատճառով տասներկու հոգի ընտրեց՝ ըստ այնմ. «Ասկէ ետք մարդիկ պիտի որսաս կեանքի համար»¹⁶:

Չորրորդ՝ որովհետեւ Իսրայէլի որդիները տասներկու բաժին էին, այսինքն՝ ցեղեր, այդ պատճառով զանոնք ի դէմս ասոնց ընտրեց, որոնք

¹¹ Մատթ. ԺԹ. 28:

¹² Մատթ. Ե. 14:

¹³ Տէս 3-րդ. ԺԲ. 1:

¹⁴ Մատթ. ԻԶ. 53:

¹⁵ Դիմոկրատիա, Դէմոկրի, Դէմոկրիտոս (Ն.Ք. շուրջ 460, Աբդեր (Թրակիա՝ ներկայիս Ադրիա) Ն.Ք. շուրջ 370), հին յունական իրապաշտ փիլիսոփայ: Դէմոկրիտոսը շուրջ 70 գիտական աշխատութիւն գրած է (վկայակոչման աղբիւրը յայտնի չէ) (Մանօթագրութիւնը Խաղ Քահանայ Ղազարեանինն է):

¹⁶ Ղուկ. Ե. 10:

բոլորին սորվեցուցին Կենաց Բանը՝ ըստ այնմ. «Գացէ՛ք Իսրայէլի կորսուած ոչխարներուն»¹⁷։

Հինգերորդ՝ քանի որ աշխարհը տասներկու բաժին է, որու մէջ կը բնակին բոլոր ազգերը, այդ պատճառով զանոնք ընտրեց, որպէսզի ամբողջ աշխարհը ճշմարտութեան գիտութեան հրաւիրեն։

Վեցերորդ՝ ըստ բարոյական տեսութեան, որովհետեւ մարդուն դռները տասներկու են, որոնց միջոցով սատանան իր աւազակները կը մտցնէ՝ չարութիւններ գործելու, այդ պատճառով տասներկու կոչեց, որպէսզի իրենց աղօթքներով պահեն եւ պատերազմին դռներու ոստիաներուն դէմ։

Եօթներորդ՝ օրինակը ճշմարտացնելու համար։ Արդարեւ, ժայռէն տասներկու վտակներ բաժնեց, որով Իսրայէլի ժողովուրդը կը զովանար, այդ պատճառով մեր Տէրը տասներկուքը ընտրեց, որոնցմէ ըմպելով մարդկութիւնը՝ կռապաշտութեան տապէն զովանայ։

Ութերորդ՝ քանի որ վակասին վրայ տասներկու ակեր կային¹⁸, որ քահանայապետին կուրծքին վրայ էր, որոնք առաքեալները կը խորհրդանշէին, որոնք ճշմարիտ Քահանային օրինակներն ու նմանութիւններն էին՝ ըստ այնմ. «Մարմին եմք Ամոր մարմինէն եւ ոսկոր՝ Ամոր ոսկորներէն»¹⁹։

Իներորդ՝ որովհետեւ մարգարէները որոնք անցեալին Բանին մարդեղութիւնը քարոզեցին դարձեալ տասներկու հոգի էին²⁰, հետեւաբար, պէտք էր, որ զինք տեսողները եւս այդքան ըլլային, որոնք ճշմարիտ մարդեղութեան մասին վկայեցին. անոնք՝ [մարգարէները], օրինակաբար ու կրկնաբար էին, իսկ ասոնք՝ [առաքեալները], ճշմարտապէս ու եզակի։

Տասներորդ՝ ըստ այլաբանութեան, քանի որ Աստուած տասներկու յատկութիւն ունի, որոնցմէ մէկը եթէ պակսի, Աստուած չըլլար։ Նախ՝ երեք անձերը, մէկ բնութիւն, մէկ զօրութիւն, մէկ տէրութիւն, մէկ կատարելութիւն, մէկ անեղութիւն, մէկ արարչութիւն, մէկ կամք, մէկ ներգործութիւն, մէկ թագաւորութիւն, մէկ անմահութիւն, մէկ Աստուածութիւն, այդ պատճառով տասներկու առաքեալներ ընտրեց, որպէսզի ասոնք ստուգապէս ամբողջ աշխարհին ուսուցանեն։

¹⁷ Մատթ. Ժ. 6։

¹⁸ Տէս Ելք ԼԵ. 9։

¹⁹ Եփես. Ե. 30։

²⁰ Նկատի ունի տասներկու «փոքր» մարգարէները՝ Ովսէն, Ամոսը, Միքիան, Յովէլը, Աբդիուն, Յովնանը, Նաոււմը, Ամբակումը, Սոփոնիան, Անգէն, Զաքարիան, Մաղաքիան։ Իսկ Եսային, Երեմիան, Եզեկիէլն ու Դանիէլը «Մ Ե Մ» մարգարէներ կը կոչուին (Ծանօթագրութիւնը ինդ քահանայ Դազարեանինն է)։

Իսկ թէ ինչո՞ւ համար յետոյ եօթանասուն երկու հոգին ընտրեց: Ասիկա բազմաթիւ խորհուրդներով:

Նախ՝ որովհետեւ աշտարակի բաժանումի ժամանակ եօթանասուն երկու հոգի էին, որոնց մէկ լեզուն բաժնուեցաւ, այդ պատճառով Տէրը աշտարակը՝ Եկեղեցին շինեց եւ ինչ որ այնտեղ աշխարհով մէկ բաժնեց, այստեղ՝ մէկ վայրի մէջ կը հաւաքէ:

Երկրորդ՝ քանի որ եօթանասուն երկու հոգի Եգիպտոս մտան²¹, ու վեց հազար հոգիով ելան, չհաշուած կիները, այդ պատճառով Տէրը եօթանասուն երկու առաքեալները ընտրեց ու խառնակ աշխարհին ղրկեց, որոնք բիւր հազարներով Վերին Երուսաղէմ ելան:

Երրորդ՝ որովհետեւ եօթանասուն արմաւենիները, որ Տէրը բուսցուց ժողովուրդը կերակրելու համար²², մարմիններ էին: Իսկ հոգեւորներու համար բանաւոր արմաւենիներ տնկեց եկեղեցւոյ մէջ, որ չարերէն անպատ է, որոնցմով միշտ կը կերակրուինք ու կ'ապրինք անոնց շնորհներով՝ ըստ այնմ. «Արդարեւ ինչպէս արմաւենիներ պիտի ծաղկին»²³:

Չորրորդ՝ քանի որ Մովսէս ժողովուրդէն եօթանասուն երկու ծերեր ընտրեց, որոնք Մովսէսի Հոգիէն խմեցին²⁴, որոնք Տիրոջ ու Անոր եօթանասուն երկու աշակերտներուն²⁵ օրինակն էին, որոնք Քրիստոսի Հոգիէն խմեցին ու տիեզերքին քարոզ եղան:

Հինգերորդ՝ որովհետեւ ժողովուրդը Բաբելոնի մէջ եօթանասուն տարի գերի մնաց եւ յետոյ ազատեցաւ²⁶, այդպէս ալ մեր ամբողջ բնութեամբ գերի եղանք սատանային, մինչեւ եօթանասուն երկու առաքեալները տիեզերքով մէկ սփռուեցան եւ ապա ազատութիւն եղաւ:

Վեցերորդ՝ քանի որ ըստ Մարգարէին՝ «Եօթանասուն տարի է»²⁷, այդպէս ալ հոգիներուն կեանքը՝ եօթանասուն երկու առաքեալները, որոնք մարմինն կեանք փչեցին ու երկարատեւ կեանք ունեցող ըրին:

Եօթներորդ՝ որովհետեւ Ղամէքէն եօթանասուն անգամ վրէժ խնդրուեցաւ օրինազանցութեան համար²⁸, այդպէս ալ սատանան Աս-

²¹ Տէս Բ. Օր. Ժ. 22:

²² Տէս Ելք ԺԵ. 27: Թիւք ԼԳ. 9:

²³ Սղմ. ՂԱ. 13:

²⁴ Տէս Թիւք ԺԱ. 16, 24, 25:

²⁵ Տէս Ղուկ. Ժ. 1:

²⁶ Ա Եզր Ա. 58: Զաք. Է 5:

²⁷ Հմմտ. Սղմ. ԶԹ. 10:

²⁸ Տէս Ծննդ. Դ. 24:

տուժոյ օրէնքները ոտնակոխ ըրաւ ու հպարտացնելով՝ մարդը կորուստի մատնեց, այդ պատճառով Աստուած եօթանասուն վրէժ խնդրողներ՝ սուրբ առաքեալները բարձրացուց:

Ութերորդ՝ քանի որ եօթանասուն անգամ Տիրոջմէ հրամայուեցաւ մեղքերը ներել²⁹, այդ պատճառով եօթանասունը ընտրեց, որպէսզի իւրաքանչիւրը, նոյն չափը միտքին մէջ պահէ:

Իններորդ՝ որովհետեւ եօթը մահացու մեղքերով³⁰ բազմապատկապէս կը կորսուինք, այդ պատճառով եօթանասուն երկուքը կարգեց, որպէսզի ձեռնտու ըլլան մեզ այս շարիքներէն ազատելու:

Տասներորդ՝ Տիրոջ մարդեղութեան յիսուն երկու անուն կայ, հաւատքի՝ տասներկու աստիճան, եւ եօթը, յոյս, սէր ու միութիւն Բանին Աստուծոյ մարմինին հետ, որոնք եօթանասուն երկու կ'ըլլան, այդ պատճառով եօթանասուն երկու հոգի ընտրեց, որպէսզի ասոնք հաւատացեալներու ականջներուն քարոզեն:

Այսքանը այս մասին:

Ժամանակն է այլեւս աստուածային այս խօսքին մեկնութեան, որ կ'ըսէ. «Դուք էք աշխարհի լոյսը»³¹:

Եւ նախ՝ տեսներեք, [թէ ինչո՞ւ համար] «լոյս» կը կոչէ առաքեալները:

Երկրորդ՝ թէ ինչո՞ւ համար «ճաղաճ» կը կոչէ:

Երրորդ՝ ինչո՞ւ «լեռ» կը կոչէ առաքինութիւնները:

Չորրորդ՝ թէ ինչո՞ւ համար «ճրագ» կ'անուանէ առաքեալները:

Հինգերորդ՝ ի՞նչ կը նշանակէ անոնց անունները:

Վեցերորդ՝ թէ ինչո՞ւ Յովհաննէս աւելի սիրելի կը կոչուի Քրիստոսի³²:

Նախ՝ տեսներեք առաջին գլուխը, թէ ինչո՞ւ համար «լոյս» կը կոչէ առաքեալները: Բազմաթիւ պատճառներով:

Նախ՝ որովհետեւ լոյսը ծագելուն խաւարը կը փախչի, այդպէս ալ առաքեալներուն քարոզութեան ելլելուն, կռապաշտութեան խաւարը փախաւ աշխարհէն՝ ըստ այնմ. «Լոյսը խաւարին մէջ կը լուսաւորէ»³³:

²⁹ Տէս Մատթ. ԺԸ. 22:

³⁰ Եօթ մահացու մեղքերն են՝ հպարտութիւնը, նախանձը, բարկութիւնը, ծուլութիւնը, ագահութիւնը, որկրամոլութիւնը, բղջախոհութիւնը (Մանօթագրութիւնը խաղ Քահանայ Ղազարեանինն է):

³¹ Մատթ. Ե. 14:

³² Տէս Յովհ. ԺԹ. 26:

³³ Յովհ. Ա. 5:

Երկրորդ՝ քանի որ լոյսի գալուն բոլոր կենդանիները կ'ուրախանան, այդպէս ալ առաքեալներուն քարոզութեամբ մարդոց որդիները ցնծացին՝ ըստ այնմ. «Եւ դուք, որ ձեր մեղքերուն մէջ մեռած էիք»³⁴, եւ այլն:

Երրորդ՝ որովհետեւ լոյսը փութանակի կը ծագի, այդպէս ալ առաքեալները Կենաց Բանը փութով քարոզեցին ամբողջ տիեզերքին՝ ըստ այնմ. «Արեւայութեան Աւետարանը ամբողջ տիեզերքին մէջ պիտի փարփարէ»³⁵:

Չորրորդ՝ քանի որ կարգ մը կենդանիներ, որոնք լոյսէն չեն լուսաւորուիր, այլ՝ կը կուրնան, ինչպէս բուսական [բուի տեսակ մը, փոքր բուսական], այդպէս ալ առաքեալներուն քարոզութենէն ոմանք խաւար դարձան ու չլուսաւորուեցան, որովհետեւ արժանի չէին, ինչպէս տաճիկներուն ազգը, որոնք Աստուծոյ Արքայութեան մէջ բաժին չստացան:

Հինգերորդ՝ քանի որ անոնք որոնք աչք ունին, կամաւորաբար կը գոցեն իրենց աչքերը լոյսին դիմաց, որպէսզի չտեսնեն. [այդ] իրենց անձերուն կորուստ է եւ ո՛չ թէ լոյսին մեղաւորութիւնն է, այդպէս ալ անոնք որոնք առաքեալներուն քարոզութեան չհաւատացին եւ կամ թերի կերպով հաւատացին, ինչպէս հերձուածողները, առաքեալները մեղադրելի չեն, այլ անոնք՝ որոնք կամաւորաբար անոնց սուրբ քարոզութեան անհնազանդ գտնուեցան:

Վեցերորդ՝ որովհետեւ լոյսը արհեստաւորներուն եւ ուղեգնացներուն օգնական է, այդպէս ալ առաքեալները իմաստասէրներուն, որոնք բնական իմաստութեամբ արհեստաւորներ էին եւ ուղիղ կեանք ստացած էին, օգնական եղան անոնց, ինչպէս փիլիսոփան Յովհաննէսի, ինչպէս Թեոֆիլոսի³⁶, եւ ուրիշ շատերու:

Եօթներորդ՝ քանի որ լոյսը տեսութեամբ գեղեցիկ է, այդպէս ալ առաքեալները տեսութեամբ գեղեցիկ էին, քան ամբողջ տիեզերքը, այդ պատճառով հրաշալի կ'երեւէին տեսնողներուն:

Ութերորդ՝ որովհետեւ գողերն ու աւազակները լոյսէն կը փախչին, այդպէս ալ սուտ առաքեալներն ու հերձուածողները, դպիրներն ու փարիսեցիները, քրմապետերն ու կուռքերուն ուսուցիչները՝ առաքեալներէն, ինչպէս Ուրիշի կիրք Յովհաննէսէն³⁷:

³⁴ Եփես. Բ. 1:

³⁵ Մատթ. ԻԴ. 14:

³⁶ Հմմտ. Գործք. Ժէ. 34:

³⁷ Հմմտ. Գործք. ԻՍ. 24: Ա Կորնթ. Ը. 1, 4, 7:

Իններորդ՝ քանի որ լոյսով բոլոր բաները կը տեսնենք ու կը ճանչնանք, չարն ու բարին կ'որոշենք, սիրելին ու թշնամին, այդպէս ալ առաքեալներուն միջոցաւ ճանչցանք ճշմարիտ Աստուածը, այլեւ տեսանք մեզ անգիտութեամբ խաւարեցնողը եւ զայն մեր մէջէն զատեցինք եւ ի Քրիստոս իմաստուն եղանք:

Տասներորդ՝ որովհետեւ առանց լոյսի հնարաւոր չէ որեւէ մէկ գործ գործել կամ կարգաւորել, այդպէս ալ անոնք, որոնք առաքեալներուն խօսքերուն ու անոնց ընթացքին չեն հետեւիր, անկարելի է Երկինքի Արքայութիւնը ժառանգեն՝ ըստ այնմ. «Ով որ ձեզ կ'անարգէ, զիս կ'անարգէ, իսկ ով որ ձեզ ընդունի, զիս կ'ընդունի»³⁸: Այդ պատճառով «լոյս» կը կոչէ առաքեալները:

Գանք երկրորդ գլուխին ու ըսենք, թէ ինչո՞ւ համար «Բաղաֆ» կը կոչէ առաքեալները՝ ըստ այնմ. «Լեռան վրայ եղած Բաղաֆը չի կրնար պահուրտիլ»³⁹: Ասիկա բազմաթիւ պատճառներով:

Նախ՝ որովհետեւ քաղաքը պարիսպով ու բուրգով հաստատուած է, այդպէս ալ առաքեալները Քրիստոսին պարսպուած էին եւ Սուրբ Հոգիին շնորհներու բուրգով ամրացած՝ ըստ այնմ. «Յս ձեզի հետ եմ մինչեւ աշխարհի վախճանը»⁴⁰:

Երկրորդ՝ քանի որ քաղաքը բազմամարդ է, այդպէս ալ առաքեալները բազմաթիւ էին, այսինքն՝ տասներկուքը եւ եօթանասուն երկուքը, ու անոնց հետեւող հինգ հարիւր հոգիները, որոնց մէջէն ճեմելով երկինքի Թագաւորը կ'ուրախանայ հաւատացեալներու բազմութեան համար:

Երրորդ՝ որովհետեւ քաղաքին մէջ բազմաթիւ բարութիւններ եւ տեսակ-տեսակի ուրախ հաւաքոյթներ կ'ըլլան, այդպէս ալ առաքեալներուն մէջ զանազան շնորհքներ կային՝ հոգեկան ու մարմնական, ինչպէս Պօղոս՝ վրանագործ էր⁴¹, Յովհաննէսը՝ նկարիչ⁴², Թովմասը՝ հիւսն էր, տակաւին զանազան առաքինութիւններ, պարկեշտութիւններ ու արդարութիւններ, որոնցմով անոնց քաղաքացիները կ'ուրախանան:

³⁸ Ղուկ. Ժ. 16:

³⁹ Մատթ. Ե. 14:

⁴⁰ Մատթ. ԻԸ. 20:

⁴¹ Տէս Գործք. ԺԸ. 3:

⁴² Տէս Գանձասար Բ, Ս. Մ ՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Սահակի նամակին պատասխանը..., Երեւան, 1992, էջ 6–17 (Մանօթագրութիւնը Խաղ Քահանայ Ղազարեանին է):

Զորրորդ՝ քանի որ քաղաքին մէջ բազմաթիւ հրաշքներ ու զարմանալի խաղեր կը կատարուին, այդպէս ալ առաքեալները նշաններ, սքանչելիքներ ու հրաշքներ կը գործէին, այլեւ՝ ձրիաբար կը բաշխէին անոնց՝ որոնց պէտք էր, ըստ այնմ. «Ինչ որ ունիմ՝ չեմ խնայեր»:

Հինգերորդ՝ որովհետեւ քաղաքին մէջ ոմանք ամուսնացած են, ոմանք ալ առանց կիներու են, այդպէս ալ առաքեալներէն ոմանք կոյս էին, ինչպէս՝ Յովհաննէսը, երկու Յակոբոսները, իսկ ամուսնացած էին՝ Պետրոսը, Մատթէոսը, եւ այլն:

Վեցերորդ՝ քանի որ ոմանք ջուր մուրացող կ'ըլլան, ուրիշներ՝ դատարկաշրջիկ, իսկ ուրիշներ՝ բարիներ, այդպէս ալ առաքեալները. Յուդան մատնիչ եղաւ, ուրիշներ՝ մարմնասէր ըլլալով՝ «ձգեցիմ Տէր ու փախաւ»⁴³, կ'ըսէ Աւետարանիչը. իսկ ուրիշներ Տիրոջ անուան համար մահ յանձն առին ու Տիրոջ կողմէ սիրուեցան, ինչպէս Յովհաննէսը, եւ ուրիշներ:

Եօթներորդ՝ որովհետեւ քաղաքին մէջ թագաւորներ ու տէրեր կան, այդպէս ալ առաքեալներուն Տէրն ու Թագաւորը Քրիստոս է՝ ըստ այնմ. «Երկրի վրայ ձեզի ո՛չ մէկը Աստուած կոչեցե՛ք, քանի որ Մէկն է ձեր Հայրը, որ երկինքին մէջ է, եւ ո՛չ մէկն ալ վարդապետ կոչեցե՛ք, որովհետեւ ձեր Ուսուցիչը Քրիստոս է»⁴⁴:

Ութերորդ՝ քանի որ եթէ պարիսպին կամ շինուածքի մը մէկ մասը կործանի, ատոնց տէրը անմիջապէս կը վերաշինէ, այդպէս ալ առաքեալներու պարագային, թէեւ Յուդան խզուեցաւ, սակայն յարութեանէն անմիջապէս ետք անոր փոխարէն Մատաթիան կարգեցին, ինչպէս Գործք Առաքելոց գիրքէն յայտնի է⁴⁵:

Իններորդ՝ որովհետեւ քաղաքը, որմէ որ կը շինուի՝ բնակութեան համար կը շինուի, այդպէս ալ Տէրը առաքեալները կարգեց Իր բնակութեան եւ Հոգիին գալուստին համար՝ ըստ այնմ. «Յաւիտեան ձեզի հետ պիտի ըլլամ»⁴⁶: Եւ թէ՛ «Փորձու...⁴⁷ Քրիստոսի, որ ինք ձեզի հետ կը խօսի»:

Տասներորդ՝ քանի որ օտար թշնամիները քաղաքը կը քակեն ու բարութիւն կը համարուի այդ, այդպէս ալ կռապաշտները՝ որոնք Քրիստո-

⁴³ Տէս Մատթ. ԻԶ. 56:

⁴⁴ Հմմտ. Մատթ. ԻԳ. 8–9:

⁴⁵ Տէս Գործք. Ա. 23:

⁴⁶ Տէս Յովհ. ԺԴ. 16:

⁴⁷ Անընթեռնելի բառ:

սի հակառակորդ էին, առաքելները սպանեցին ու այնպէս կը կարծէին թէ Աստուծոյ պատարագ կը մատուցէին՝ ըստ Տէր Աստուծոյ խօսքին, թէ՛ «ո՛վ որ ձեզ սպաննէ՝ պիտի կարծէ թէ Աստուծոյ ծառայութիւն կը մատուցէ»⁴⁸։ Նոյն կերպ կը վարուին Անոր հետեւորդներուն հետ՝ իրենց համար արգասիք համարելով այդ, այդ պատճառով ահեղ ատեանին ատեն անոնց համար գեհենին հուրը պահուած է։

Իսկ թէ «ճաղաքը չի՛ կրնար պահուրտիլ», իբրեւ թէ աստուածային իմաստութիւնները, որ իմանալի լեռն է, դուք այնտեղ պիտի բարձրանաք։

Արդարեւ՝ «դո՛ւք չէ՛ք կրնար պահուրտիլ» աշխարհի հեշտութեան տակ, այլ՝ բոլորին աչքերը ձեզի պիտի նային՝ ձեր քաղաք դիմելու եւ ձեր բարութիւններէն վայելելու։

Երկրորդ, կ'ըսէ. «Ոչ կարէք ցուցանելով զկար մեղանշելոյն բարձել, որք ոչ կարացին յետ Հոգւոյն գալստեանն մահու չափ մեղանշել»⁴⁹։

Երրորդ՝ դուք աշխարհի ստեղծագործութենէն իսկ առաջ երկրէն ընտրուած էք, այլեւ՝ ձեր անունները երկինքի մէջ գրուած է, այդ պատճառով ալ չէք կրնար պահուրտիլ անծանօթի մը նման։

Չորրորդ՝ կ'ըսէ. «Ձեզ որպէս ծառ տնկեցի, որպէսզի Ինծի համար անոյշ պտուղ բերէք, այդ պատճառով չէ՛ք կրնար անպտուղ ըլլալ»։

Հինգերորդ՝ ձեր ոսկորներուն նշխարները հասարակ մարդոց ոսկորներուն նման չեն, այլ՝ նոյնիսկ եթէ ձեզ լեռներով ծածկեն, չէ՛ն կրնար ձեզ թաքցնել, որովհետեւ Ես ձեր ոսկորները մէջտեղ պիտի հանեմ։

Վեցերորդ՝ տակաւին, ձեր մահէն ետք առանց բժշկութեան [այսինքն՝ հրաշքներ կատարելու, բժշկելու] չէք կրնար մնալ։

Իսկ հիմա երրորդ գլուխը տեսնենք, քանի որ կ'ըսէ. «Ձի՛ք կրնար պահուրտիլ, որ լեռան վրայ էք»⁵⁰, որովհետեւ լեռը առաքինութիւն ու սրբութիւն կը կոչէ, որու վրայ մարդիկ քաղաքը կը շինեն։ Ասիկա՝ բազմաթիւ պատճառներով.

Նախ՝ որովհետեւ լեռը անդրդուելի ու անշարժ է, այդպէս ալ եթէ ճշմարիտ առաքինութիւնը ըլլայ, ամէն տեսակի փորձութիւններէն ան-

⁴⁸ Յովհ. ԺԶ. 2։

⁴⁹ Միտքին անյստակութեան պատճառով գրաբարով ձգած ենք նախադասութիւնը։

⁵⁰ Հմմտ. Մատթ. Ե. 14։

շարժ կը մնայ, ինչպէս Տէրը կ'ըսէ. «Հեղեղն իսկ չի՛ կրնար փանդել տունը, քանի որ հաստատուն էր»⁵¹:

Երկրորդ՝ որովհետեւ լեռը կարողութիւն ունի վերցնելու [շալկելու] բոլոր անոնց, որոնք իր վրայով կ'ընթանան, այդպէս ալ սրբութիւնը, եթէ ոեւէ մէկը կամենայ, կարենայ բոլորին իր մօտ հաւաքել՝ ըստ այնմ. «Եթէ ոեւէ մէկը մօտս գայ, դուրս պիտի չհաննամ»⁵²: Եւ թէ՛ «Ով որ արդարութիւնը կը սիրէ, անոր վաստակը առաքինութիւնները կ'ըլլան»⁵³:

Երրորդ՝ քանի որ իւրաքանչիւր ոք դժուարութեամբ կը բարձրանայ լեռան գագաթը, այդպէս ալ է առաքինութիւնը. դժուարութեամբ եւ առանց շարշարանքներու ո՛չ ոք կրնայ բարձրանալ՝ ըստ այնմ. «Աշխարհը արժանի չէ նեղութիւն կրող ու շարշարուած մարդոց»⁵⁴: Եւ թէ՛ «Բազմաթիւ նեղութիւններ պէտք է կրենք՝ Աստուծոյ Արքայութիւնը մտնելու համար»⁵⁵:

Չորրորդ՝ որովհետեւ լեռը թռչուններուն եւ վայրի անասուններուն համար ապաւինութիւն է՝ ըստ այնմ. «Ժայռերը նապաստակներուն համար ապաւին են»⁵⁶, այդպէս ալ առաքինութեան սրբութիւնը մեղաւորներուն ապաւինն է, որոնք այնտեղ հասնելով զերծ կը մնան շար գազանէն ու բռնող սատանայէն:

Հինգերորդ՝ քանի որ լեռը դաշտերէն բարձր է ու յստակ կերպով բոլորին կ'երեւի, այդպէս ալ սրբութիւնը հեռու է բոլոր աշխարհական հոգիներէն [այսինքն՝ աշխարհիկ կեանքով ապրողներէն], իսկ անոնք որոնք ունին զայն, բոլորին յայտնի են՝ ըստ այնմ. «Սուրբ Հոգին նենգութենէն կը փախչի»⁵⁷:

Վեցերորդ՝ որովհետեւ արեգակին ջերմութիւնը ոչինչ կրնայ ներգործել [լեռան վրայ], քանի որ լեռան գագաթը աւելի ցուրտ է, այդպէս ալ բորբոքած ցանկութեան ջերմութիւնն ու սատանան ո՛չինչ կրնան ազդել առաքինիին վրայ, որովհետեւ անոնց յոյսը անմահութեամբ լեցուն է:

Եօթներորդ՝ քանի որ [լեռը] խիտ քար ու հող է՝ իրարու միացած ու այդպէս բարձրացած, այդպէս ալ առաքինութիւնը բազմաթիւ [տեսակներ ունի]. պահք, աղօթք, եւ միւսներով բազմացած՝ գեր ի վեր կ'ըն-

⁵¹ Ղուկ. 2. 48:

⁵² Յովհ. 2. 37:

⁵³ Տէս Իմաստ. Ը. 7:

⁵⁴ Տէս եբր. ԺԱ. 37–38:

⁵⁵ Գործք. ԺԴ. 22:

⁵⁶ Սղմ. ՃԳ. 18:

⁵⁷ Իմաստ. Ա. 5:

թանան քան բոլոր արարածները, ինչպէս Մովսէսը, Եղիան ու Ենովքը, որովհետեւ ասով՝ [առաքինութեամբ] անկոխ ճանապարհէն ընթացան:

Ութերորդ՝ քանի որ լեռը պարարտ է, որովհետեւ անոր վրայ ամէն տեսակի բանջարներ ու զանազան դեղեր կը բուսնին, տակաւին քաղցրահամ աղբիւրներ կը բխին անկէ, այդպէս ալ կատարեալ առաքինութիւնը կրնայ հոգեւոր ու քաղցր իմաստներ բխել՝ յօգտակարութիւն անմիտներուն, ինչպէս նաեւ հոգեշահ խրատներ՝ ի կերակուր անասնացածներուն, տակաւին՝ մեղաւորներուն համար փրկութեան միջոց ու դեղ, ինչպէս Դաւիթը կ'ըսէ. «Աստուծոյ լեռը, պարարտ լեռը»⁵⁸: Իսկ Սողոմոնը պակասամիտներուն կ'ըսէ. «Եկէ՛ք եւ կերէ՛ք իմ հացէն ու կշտացէ՛ք»⁵⁹:

Իններորդ՝ որովհետեւ հիւանդը եւ տկարը չէն կրնար լեռ բարձրանալ, այդպէս ալ ով որ խորհուրդով տկար ու հոգիով հիւանդ է, այսինքն՝ մեղքերէն չզարձող [չզղջացող], չի' կրնար առաքինութեան լեռը ելլել՝ ըստ այնմ. «Իւրաքանչիւր ով որ շարութիւն կը գործէ, լոյսիմ չի գար»⁶⁰:

Տասներորդ՝ քանի որ լեռան ստորոտը լայն է, սակայն գագաթը բոլոր կողմերէն նեղացած է եւ ինչ որ կէտի մը վրայ հաստատուած է, այդպէս ալ առաքինութիւնը, թէեւ երկրի վրայ է ու բազմաթիւ է, սակայն ամբողջ դիտաւորութիւնը Աստուծոյ ուղղուած է, այդ պատճառով կ'ըսէ. «Լեռան վրայ եղած ֆաղափը չի' կրնար պահուրել»⁶¹:

Տեսնենք այժմ չորրորդ գլուխը, թէ ինչո՞ւ համար առաքեալները «նրազ» կը կոչէ՝ ըստ այնմ. «Ոչ ոք նրազը կը վառէ եւ կը պահէ կաթսայի տակ»⁶²: Ասիկա բազմաթիւ պատճառներով.

Նախ՝ որովհետեւ ճրագը փոքր իր մըն է, սակայն լոյս կու տայ, այդպէս կ'ըսէ առաքեալներուն նաեւ. «Թէեւ փոքր ու բիշ է՝ դո՛ւք, սակայն պարտաւոր եմ ամբողջ տիեզերքը լուսաւորել»:

Երկրորդ՝ քանի որ ճրագին լոյսը նախ ինքն իր մէջ ունի լոյսին պայծառութիւնը եւ ապա ուրիշներուն կու տայ, այդպէս ալ կ'ըսէ. «Նախ ձեր անձերը մաքրեցէ՛ք եւ ապա ուրիշներունը», որովհետեւ՝ «ով որ կը գործադրէ ու կ'ուսուցանէ, ան մեծ պիտի կոչուի»⁶³:

⁵⁸ Սղմ. Կէ. 16:

⁵⁹ Առակ. Թ. 5:

⁶⁰ Հմմտ. Յովհ. Գ. 20–21:

⁶¹ Մատթ. Ե. 14:

⁶² Մատթ. Ե. 15:

⁶³ Տէս Մատթ. Ե. 19:

Երրորդ՝ քանի որ [ճրագը] բոլորին տեսողութիւնը դէպի իրեն կը քաշէ պարտադրաբար, այդպէս ալ՝ եթէ առաքինիներ ըլլաք, պարտադրաբար բոլորը դէպի ձեզ կը քաշէք:

Զորրորդ՝ որովհետեւ վառուած ճրագը այլեւս բազմաթիւ ճրագներ կրնայ վառել, իսկ մարածը՝ ո՛չ, այդպէս ալ, կ'ըսէ, թէ՝ «իմչ որ կը պատուիրեմ ձեզի, պիտի կատարէք, Ինձմէ աւելի մեծ գործեր եւս պիտի գործէք»⁶⁴, ինչպէս յայտարարեց:

Հինգերորդ՝ քանի որ քիչ ժամանակ ճրագը աշտանակին վրայ կը մնայ, ու կը սկսի փոքրանալ ու անցնիլ, իսկ ձէթը կը հոսի, այդպէս ալ կ'ըսէ. «Եթէ աշխարհի պատրանքներուն միջ մը մօտենաք, կը յաջողի ձեզ իշխանութենէն ձգել ու ձեր սրբութիւնը կորսնցնել, ինչպէս նաեւ ձեր մեծութեան պայծառութիւնը վերացնել»:

Վեցերորդ՝ որովհետեւ ճրագի կարիք կ'ըլլայ, այդ պատճառով զայն աշտանակի վրայ կը դնեն, այդպէս ալ մեր մարդկային բնութիւնը ձեր կարիքն ունի, կ'ըսէ, այդ պատճառով ձեզ ազգերուն գլուխ կը դնեմ, որոնք կռապաշտութեան խաւարին մէջ մեռած են:

Եօթներորդ՝ քանի որ եթէ անօթի մը տակ ինչ որ բան դնեն, թէ՛ ինք եւ թէ՛ ալ իր լոյսը կը կորսուին, այդպէս ալ կ'ըսէ, թէ՝ «աշխարհի հեշտութիւններուն տակ կը մտնէք, որով թէ՛ դուք եւ թէ՛ ձեր գործն ալ ձեզի հետ կը կորսուիք»:

Ութերորդ՝ որովհետեւ նախ ամէն ինչ կը պատրաստեն ու ետքէն ճրագը կը վառեն, այդպէս ալ կ'ըսէ. «Ձեր բոլոր կարիքները եւ պատրաստած եմ՝ միմչ ձեր խնդրելը»⁶⁵, այդ պատճառով՝ «հիմա ձեզ պատերազմի գործին համար կը վառեմ»:

Իններորդ՝ քանի որ ճրագը բոլորին լոյս կու տայ եւ ո՛չ թէ ինչ որ մէկուն միայն, եւ ո՛չ ոքէ սպասելիք ունի, այդպէս ալ, կ'ըսէ՝ «դուք եւս բոլորին անխափր փարօղեցէք, քանի որ “հրեայի ու հեթանոսի խտրութիւն չկայ”»⁶⁶, եւ այլն:

Տասներորդ՝ որովհետեւ ճրագը գիշերը կը վառեն, այդպէս ալ անաստուածութեան գիշերը ամբողջ տիեզերքը բռնած է, այդ պատճառով «վառել» ջանացէք, բոլորը դէպի զիս ձգեցէք, այսինքն՝ եկեղեցի, հաստատելու ու նախախնամելու համար:

⁶⁴ Տէս 3ովհ. ԺԴ. 12:

⁶⁵ Հմմտ. Մատթ. 23. 8:

⁶⁶ Հռոմ. Ժ. 12:

Հիմա անհրաժեշտ կը նկատեմ հինգերորդ գլուխը տեսնել, այսինքն՝ սուրբ առաքեալները իրենց անուններով առանց զանց ընելու ունէ մէկը, որովհետեւ իրենց մէջ բազմաթիւ ծածկուած իմաստներ ունին:

Գիտելի է, թէ քերթողները իւրաքանչիւր անուն երեք բանէ կը դնեն, այսինքն՝ իրէն [իմա՝ նաեւ հանգամանք], ձայնէն ու գործէն: Իրէն, ինչպէս սափոր մը, ձայնէն՝ ինչպէս ճնճղուկ մը, գործէն՝ ինչպէս սղոց մը: Այդպէս ալ սուրբ առաքեալներուն անունները այս երեք մասերէն դրուած են:

Արդ, նախ՝ Պետրոս, որ ժայռ կը թարգմանուի⁶⁷. ձայնէն ժայռ կոչուեցաւ, որովհետեւ մեր Տէրը Աստուած դաւանեցաւ⁶⁸: Երկրորդ՝ ժայռ կ'ըսուի իր գործէն, որովհետեւ իր դաւանութեամբ Եկեղեցւոյ հիմքը հաստատեց: Երրորդ՝ հանգամանքէն կը կոչուի, քանի որ [Քրիստոսի] յարութենէն ետք անխախտ հաւատքով մեռաւ իր Տիրոջ նման⁶⁹:

Նմանապէս, Յակոբոս «խաբող» կը կոչուի⁷⁰: Նախ՝ որովհետեւ սատանային խաբեց, ասիկա՝ գործէն: Երկրորդ՝ «խաբող»՝ ձայնէն, այսինքն՝ թարթող, քանի որ իր մարմինը խաբեց՝ անոր կամքին ետեւէն չերթալով ու ամէն ժամ խրատելով: Երրորդ՝ հանգամանքէն կը կոչուի, որովհետեւ իր մահէն ետք անոր մարմինը ծով նետեցին՝ առանց գլուխի⁷¹, իսկ ծովը [անոր մարմինը] Սպանիոյ [ծովեզերքը]՝ իր վիճակին մէջ հանեց, ուր կոյր մը կար այնտեղ, եկաւ ու մարմինին հասաւ ու անոր մօտենալով՝ աչքերը բացուեցան, եւ իմանալով՝ քաղաքին տեղեկացուց, թէ աստուած մը՝ առանց գլուխի [ծովեզերքն է], որ իմ աչքերս բացաւ ու անոնք այնպէս պաշտեցին, մինչեւ որ Պօղոսը եկաւ ու պատմեց, թէ մեր եղբայրը՝ Յակոբոսն է, իսկ դուք անոր վիճակն էիք⁷²:

Նոյնպէս Յովհաննէսը «հնազադութիւն» կը թարգմանուի իր գործէն, որովհետեւ կուսութիւնը ամբողջութեամբ պահեց, Տէրը իրեն ծանր հա-

⁶⁷ Տէս Յովհ. Ա. 42:

⁶⁸ Տէս Մատթ. ԺԴ. 29:

⁶⁹ Աւանդութեան համաձայն Պետրոս Առաքեալ Անտիոքէն Հռոմ կ'անցնի ու այնտեղ՝ գլուխն ի վար խաչուելով կը նահատակուի (Աստուածաշնչական Սուրբեր, Գանձասար, Երեւան 1997, էջ 173):

⁷⁰ Մատթէոս Զուղայեցի Վարդապետը Յակոբոսին «խաբող» անուանումը կը վերագրէ, ինչը հարազատ է Իսահակ Նահապետի որդիին՝ Յակոբին, տե՛ս Ծննդ. ԻԵ. 26 (Մանօթագրութիւնը խաղ Քահանայ Ղազարեանինն է):

⁷¹ Գործք. ԺԲ. 1–2:

⁷² Տէս Աստուածաշնչական Սուրբեր, Շնորհք Արքեպիսկոպոս ԳԱԼՈՒՍՏԵԱՆ, Գանձասար, Երեւան, 1997, էջ 174–175:

մարեց, կին մարդու չնայելով պահեց: Երկրորդ՝ հանգամանքէն, որ շատ հնազանդ ու լսող էր Տիրոջ եւ միւս աշակերտներուն, այդ պատճառով Յիսուս կը սիրէր զինք: Երրորդ՝ ձայնէն, քանի որ աւետարանական ձայնը իր անունը չիշեց՝ իր հնազանդութեան պատճառով:

Այսպէս եւ Անդրէասը, որ «ազգին սիրելի» է՝ հանգամանքէն, որովհետեւ ան մարդակերներու ու գազանաբարոյ ժողովուրդներուն մէջ սիրուեցաւ⁷³: Երկրորդ, քանի որ մարմարիոն բագինէն ձայնով՝ ջուր հանեց, այդ պատճառով այդ ազգը հաւատաց: Երրորդ՝ գործէն, որովհետեւ թմրածները բանտէն հանեց ու խելօքցուց, եւ զանոնք քաղաքէն դուրս կերակրեց, մինչեւ քաղաքը Աստուածպաշտութեան դարձուց:

Փիլիպպոս «ջահի խօսք» կը թարգմանուի⁷⁴: Նախ՝ հանգամանքէն, որովհետեւ իբրեւ ջահ, որ փութանակի կը վառի, դառն տանջանքներուն չհանդուրժեց, այլ՝ անիծեց քաղաքը ու անմիջապէս կորսնցուց⁷⁵: Երկրորդ՝ ձայնէն, քանի որ ըսաւ. «Երկիրը թող իր բերանը բանայ ու կու տայ այս ժողովուրդը»: Երրորդ՝ գործէն, որովհետեւ կախաղանին վրայ սիրով մեռաւ ու Երկինքի Արքայութեան արժանի եղաւ:

Թովմաս, որ «անհասանելի խորութիւն» կ'ըսուի: Նախ՝ հանգամանքէն, որովհետեւ իմաստութեամբ լեցուն էր, այդ պատճառով կը խոստանար թագաւորին ապարանք կառուցել ու երկինքի մէջ շինեց: Երկրորդ՝ ձայնէն, քանի որ ինքզինք Տիրոջ ծառայ ըսաւ ու ծախել տուաւ Արքանէս վաճառականին⁷⁶: Երրորդ՝ գործէն, թագաւորին ամբողջ ունեցուածքը աղքատներուն բաժնեց, որ մարմնաւոր ապրումներու համար կու տար, որով թագաւորը շահեցաւ:

Բարթոլոմէոս, որ ստուգապէս «Աստուծոյ որդի» կը լսուի: Նախ՝ գործէն, որովհետեւ մարմնաւոր ծնողքը ուրացաւ ու Աստուծոյ որդիա-

⁷³ Աւանդութեան համաձայն Անդրէաս Առաքեալը Սկիւթացիներու երկրին մէջ քարոզած է: Կը կարծուի թէ հիւսիսային Յունաստանի մէջ քարոզած է, ուր ալ նահատակուած է Պաթրաս քաղաքին մէջ (Ծանօթագրութիւնը խաղա Գահանայ Ղազարեանինն է):

⁷⁴ Մատթէոս Վրդ.ը Փիլիպպոս բառը որպէս «ջահի խօսք» կը ստուգաբանէ, սակայն «Բառգիրք Հայոց»ը «ձեռքերու բերան» եւ «ջահերու բերան» տարբերակները ունի, նոյնը կը վկայէ նաեւ «Յայսմաւուրք»ը (Բառգիրք Հայոց, Երեւան, 1975, էջ 326: Յայսմաւուրք, Կ. Պոլիս 1706, Յունիս 30, էջ 835, յետագայ մէջբերումները՝ Յայսմաւուրք ձեռով) (Ծանօթագրութիւնը խաղա Գահանայ Ղազարեանինն է):

⁷⁵ Յայսմաւուրքի վկայութեան համաձայն Փիլիպպոս Առաքեալը Հերապոլիս քաղաքին մէջ նահատակուած է՝ փայտէ մը կախուելով: Այդ ատեն Սուրբ քաղաքը կ'անիծէ ու անհաւատները կորուստի կը մատնէ (էջ 835–836). (Ծանօթագրութիւնը խաղա Գահանայ Ղազարեանինն է):

⁷⁶ Տէս Յայսմաւուրք, էջ 836:

ցաւ: Երկրորդ՝ հանգամանքէն, քանի որ մաշկողը մորթը հանեց ու մարմինով կարմրեցաւ, ինչպէս Տէրը խաչին վրայ, եւ ասիկա՝ Տիրոջ համար⁷⁷: Երրորդ՝ ձայնէն, որովհետեւ մորթը հանելէն ետք, մորթը առած կը շրջէր՝ աղաղակելով. «Տեսէ՛ք, որովհետեւ Քրիստոսի որդիութեան համար մորթս հանեցի»:

Մատթէոս, որ «կենաց երգ» է: Նախ՝ հանգամանքէն, որովհետեւ Կեանքը կոչեց [հրաւիրեց] զինք, այսինքն՝ Քրիստոս, ըստ այնմ. «Տեսաւ, որ Մատթէոսը նստած էր, ըսաւ՝ ետեւէս եկո՛ւր»⁷⁸, այս է երգը: Երկրորդ՝ ձայնէն, որովհետեւ Կենաց Աւետարանը եւ մարդոց փրկութեան առիթը երգեց: Երրորդ՝ գործէն, քանի որ նախ գաւազանի վրայ վարդապետեց, ինչ բան մենք որպէս սահմանում առնելով, նախ՝ մեծերէն հրաման կ'առնենք եւ ետքէն կը քարոզենք, ինչպէս ինք՝ Քրիստոսէն [հրաման ստացաւ]:

Սիմոն, որ է Շմաւոն, եւ ասիկա «դրօւած» կը թարգմանուի: Նախ՝ հանգամանքէն, որովհետեւ առաքեալ դրուեցաւ Քրիստոսէն: Երկրորդ՝ գործէն, քանի որ բարբարոս երկրին⁷⁹ մէջ հաւատք դրաւ: Երրորդ՝ ձայնէն, որովհետեւ Աստուծոյ Բանին նախանձայոյց էր:

Դեբէոս, որ է «սիրա»: Ասիկա նոյնինքն Թագէտոն ու Յուդա Յակոբեանն է, որ է խոստովանութիւն: Նախ՝ ձայնէն, որովհետեւ զՔրիստոս խոստովանեցաւ թագաւորին առջեւ: Երկրորդ՝ գործէն «սիրա» կոչուեցաւ, քանի որ նախ Աբգար թագաւորը մկրտեց⁸⁰ ու սիրտ դրաւ հաւատացեալներուն: Երրորդ՝ հանգամանքէն, մեր ազգին սիրտն է, ուրկէ մեր ազգին շնորհքի շառաւիղը՝ Սուրբ Գրիգորը ծագեցաւ, իր յղութեան սկիզբը:

Յակոբոս Ալփեան, որ է «խաբող», գացածդ, որ չխաբուեցաւ այս [աշխարհի] կենցաղին երթալու, այլ մանաւանդ խաբեց ու Վերին Երուսաղէմ անցաւ:

Մատթիա, որ «վիճակով ընտրուած» կ'ըսուի, որ Երկինքի Արքայութիւնն ալ շահեցաւ՝ իր բաժինը կատարելով հանգամանքով ու գործով,

⁷⁷ Տէս Աստուածաշնչային Սուրբեր, Գանձասար, Երեւան, 1997, էջ 181:

⁷⁸ Մատթ. Թ. 9:

⁷⁹ Նկատի ունի Պօղոս Առաքեալին քարոզութիւնը հեթանոսներուն մէջ, ինչ բանի համար ալ նաեւ կոչուած է «հեթանոսներու առաքեալ», տէս Գործք. ԻԲ. 21, ԻԶ. 3: Բ. Տիմ. Ա. 11 (Ծանօթագրութիւնը Խաղ Քահանայ Ղազարեանինն է):

⁸⁰ Տէս Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երեւան, 1997, գլուխ ԼԲ., ԼԳ., ԼԴ. (Ծանօթագրութիւնը Խաղ Քահանայ Ղազարեանինն է):

եւ նոյնը ձայնով իր աշակերտներուն ժառանգեց: Բայց, ոեւէ մէկուն անպատեհ չթուի այս, որովհետեւ այս ընտրութիւնը Տէրը կատարեց, քանի որ Սիմոնը՝ Սիմոն չձգեց, այլ՝ Պետրոս անուանեց, իսկ Յովհաննէսն ու Յակոբոսը Բաներեգէս կոչեց⁸¹, իսկ միւսները, որ Աւետարանին մէջ յայտնի են, որովհետեւ բոլորին Տէր էր եւ գիտէր թէ ինչ պիտի պատահի անոնց հետ: Այդ պատճառով անունով կանչեց զանոնք ըստ Մարգարէին. «Որ աստղերուն բազմութիւնը կը հաշուէր, ու ամոնցմէ իւրաքանչիւրը իր անունով կը կանչէր»⁸²: Եւ մենք, այդ իմաստներուն քիչ մը ժամանակ տրամադրելով՝ բացայայտեցինք:

Հիմա տեսնենք վեցերորդ գլուխը, թէ քանի՞ բանով Յովհաննէսը աւելի է քան Տիրոջ միւս աշակերտները: Գիտելի է, թէ բազմաթիւ բաներով.

Նախ՝ որովհետեւ Քրիստոսին կողմէ յատուկ սիրով սիրուեցաւ՝ ըստ այնմ. «Աշակերտը, որ Յիսուս կը սիրէր»⁸³, բազմաթիւ տեղեր գրուած է:

Երկրորդ՝ քանի որ միայն ինք արժանի դարձաւ փաթթուելու⁸⁴ Տիրոջ՝ ըստ այնմ. «Փաթթուելով Ամոր՝ “Տէր, ո՞վ է որ պիտի մատնէ...”»⁸⁵:

Երրորդ՝ որովհետեւ աստուածական շունչէն՝ մեղքերու ամէն տեսակի աղտէն մաքրուեցաւ, այդ պատճառով այլեւս չկրցաւ մեղանչել՝ ըստ այնմ. «Մեզ պահեցիր կիներու հետ խառնակուելէ»⁸⁶:

Չորրորդ՝ քանի որ ամէն անգամ երբ աշակերտները Տէրը չէին ճանշնար, ան կ'ըսէր. «Ամ Տէ՛րն է», ինչպէս երբ ծովին վրայէն քալելը տեսնելով՝ զարհուրեցան, իսկ ասիկա [Յովհաննէսը] քաջալերեց զանոնք ըսելով, թէ Տէ՛րն է⁸⁷:

Հինգերորդ՝ որովհետեւ Աստուածաբան Աւետարանիչ է՝ անճառելի ծնունդը պատմելով, ինչպէս իր Աւետարանին մէջ կը պատմէ:

Վեցերորդ՝ քանի որ իր եղբօր՝ Յակոբոսին հետ յանձն առաւ մահուան բաժակը խմել⁸⁸, որով չարչարանքներու բաժակը խմեց՝ իր անձը սուրբ պահելով:

⁸¹ Տէս Մարկ. Գ. 17:

⁸² Հմմտ. Սղմ. Ճեղ. 4:

⁸³ Յովհ. ԻԱ. 7:

⁸⁴ Արեւելահայերէն թարգմանութիւնը գործածած է «կրծքովն ընկաւ»,

⁸⁵ Տէս Յովհ. ԻԱ. 20:

⁸⁶ Հմմտ. Ա. Կորնթ. Ե 9, 11: Յայտ. ԺԴ. 4:

⁸⁷ Տէս Մատթ. ԺԴ. 22–23: Մարկ. Զ. 22–33: Յովհ. Զ. 15–21:

⁸⁸ Հմմտ. Մարկ. ԺԶ. 18: Տէս Յայսմաւուրք, էջ 835:

Եօթներորդ՝ որովհետեւ խաչելութեան ժամանակ Տէրը միայն ասոր յանձնեց իր մայրը՝ ըստ այնմ. «Որդեա՛կ, ահաւասիկ մայրդ»⁸⁹:

Ութներորդ՝ քանի որ միայն ասիկա Քրիստոսի փոխանորդ եղաւ՝ ըստ այնմ. «Որ Տէրը զայն իր մօրը տուաւ՝ իր փոխարէն, որպէսզի մխիթարէ զինք»:

Իններորդ՝ որովհետեւ մինչեւ Աստուածածինին մահը սրբութեամբ ծառայեց անոր, իսկ մահանալէն ետք գծեց Տիրամօր պատկերը եւ մեզի որպէս բժիշկ տուաւ ամէն տեսակի ցաւերէն⁹⁰:

Տասներորդ՝ քանի որ Պետրոսէն աւելի արագ հաւատաց յարութեան, որովհետեւ զօրեղապէս հաստատուած էր Անոր սիրոյն մէջ՝ ըստ այնմ. «Տեսաւ ու հաւատաց»⁹¹:

Տասնմէկերորդ՝ որովհետեւ ասիկա մինչեւ Տիրոջ յարութիւնը, ամէն տեղ աշակերտներուն կը ծառայէր հնազանդութեամբ ընթանալով ու անոնց կարիքները հոգալով:

Տասներկրորդ՝ քանի որ Տէրը ասոր ըսաւ. «Կ'ուզեմ, որ ան ապրի, մինչեւ ես գամ»⁹², այդ պատճառով աշակերտները կարծեցին թէ ան պիտի չմեռնի:

Տասներորդ՝ որովհետեւ մարդկային բնութենէն միայն ասիկա կրցաւ պարծենալ մինչեւ մահ հոգիով ու մարմինով սուրբ ըլլալուն, Տիրոջ նմանելով:

Տասնչորրորդ՝ քանի որ Տիրոջ աշակերտներուն մէջէն միայն ասիկա բնական մահով մեռաւ, աւելի քան հարիւր տարի ապրելով:

Տասնհինգերորդ՝ որովհետեւ միայն ասիկա իր մահէն ետք մարմինով երկինք վերափոխուեցաւ, Տիրամօր նման, եւ առհաւատչեայ յարութիւնը առաւ՝ կենդանացեալ յաւիտենական կենդանութիւնը, եւ մեզի՝ տօնողներուն համար բարեխօս է ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որ օրհնեալ է [յաւիտեանս յաւիտենից: Ամեն]:

Գրաբարէ արեւմտահայերէնի վերածեց
ՎԱՐԱՆ Դ (ՅԱԿՈԲ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆԸ

⁸⁹ Տէս Յովհ. ԺԹ. 27:

⁹⁰ Տէս Գանձասար Բ, Ս. Մովսէս ԽՈՐԵՆԱՅԻ, Սահակի թուղթին պատասխանը..., Երեւան, 1992, էջ 6–17 (Մանօթագրութիւնը իսպ. Քահանայ Ազգարեանինն է):

⁹¹ Յովհ. Ի. 8:

⁹² Տէս Յովհ. ԻԱ. 22, 23: